

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵ-
ՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱ-
ԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի,
Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,
Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկա-
յացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար
Ս. Կարապետյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական
դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդ-
վածներին,

ընթաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապե-
տության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ 2014 թվականի

օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության երկրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի դեկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ջ Ե Ց**.

1. «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության երկրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիրը (այսուհետ նաեւ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ստորագրվել է 2014 թվականի օգոստոսի 6-ին:

2. Համաձայնագրով Միջազգային զարգացման ընկերակցությունը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է վեց միլիոն երկու հարյուր վաթսուն հազար (6.260.000) հատուկ փոխառության իրավունքներին համարժեք փոխառություն, որից Համաձայնագրով սահմանված պայմաններին եւ կարգին համապատասխան կհատկացվի երկու միլիոն չորս հարյուր վաթսուն հազար (2.460.000) հատուկ փոխառության իրավունքներով գումար (փոխառության Ա մասնաբաժին կամ ՄՁԸ 5505-AM) եւ երեք միլիոն ութ հարյուր հազար (3.800.000) հատուկ փոխառության իրավունքներով գումար (փոխառության Բ մասնաբաժին կամ ՄՁԸ 5504-AM)՝ աջակցելու համար Համաձայնագրով նախատեսված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանը:

Մասհանված փոխառության մնացորդի Ա մասնաբաժնի համար տոկոսավճարի գումարը կազմում է տարեկան մեկ եւ մեկ քառորդ տոկոս (1.25%), իսկ

փոխառության մնացորդի Բ մասնաբաժնի համար՝ տարեկան մեկ ամբողջ չորս տասնորդական տոկոս (1.4%): Վճարման ժամկետներն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը եւ օգոստոսի 1-ը: Վճարման արժույթն է դոլարը:

Ծրագրի նպատակներն են՝

ա) բարելավել արոտավայրերի եւ անասնապահական համակարգերի արտադրողականությունն ու կենսունակությունը նպատակային համայնքներում.

բ) ավելացնել ընտրված անասնապահական եւ բարձրարժեք ագրոպարենային արժեշիթաների արտադրանքի շուկայահանումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ.

- արժեշիթայի զարգացում.

- պետական հատվածի կառույցների ուժեղացում.

- Ծրագրի համակարգում եւ կառավարում:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) Ծրագրի պատշաճ եւ արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Ծրագրի իրականացման ողջ ընթացքում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կազմում պահել Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ.

բ) կազմել եւ Միջազգային զարգացման ընկերակցությանը ներկայացնել, վերջինիս համար ընդունելի տեխնիկական առաջադրանքին համապատասխան, Ծրագրի իրականացման ձեռնարկ (Ծրագրի գործառնական ձեռնարկ).

գ) Ծրագիրն իրականացնել ըստ Ծրագրի գործառնական ձեռնարկի.

դ) Ծրագրի իրականացման ընթացքում, Ծրագրի փոխադարձ կապի ապահովման եւ բողոքների լուծման նպատակով, մշակել եւ իրագործել հանրությանը հասանելի եւ Միջազգային զարգացման ընկերակցության համար ընդունելի՝ բողոքների քննության մեխանիզմ.

ե) գնահատել, ուսումնասիրել, հաստատել եւ հսկողություն սահմանել Համայնքային հիմնադրամի ենթածրագրերի եւ Նպատակային ենթածրագրերի նկատմամբ.

զ) վարկի հասույթից Ծրագրի ներքո ընտրված շահառուներին հատկացնել Նպատակային ենթածրագրի դրամաշնորհներ՝ Միջազգային զարգացման ընկերակցության կողմից հաստատված եւ Ծրագրի գործառնական ձեռնարկում նշված պայմաններով.

է) անցկացնել Ծրագրի առաջընթացի մշտադիտարկում եւ գնահատում, կազմել եւ Միջազգային զարգացման ընկերակցությանը ներկայացնել Ծրագրի հաշվետվություններ՝ Համաձայնագրով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը Համաձայնագրի ամսաթվին հաջորդող հարյուրութսուներորդ (180) օրն է:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2014 թվականի դեկտեմբերի 11-ին հավանություն է տվել սույն գործով քննության առարկա Համաձայնագրին:

5. Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ դրանց կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային /փոխառության/ միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Համաձայնագիրը եւս պահանջում է հասցեագրված վերահսկողություն փոխառության միջոցների օգտագործման եւ Ծրագրի իրականացման եւ կառավարման առումով՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության երկրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 դեկտեմբերի 2014 թվականի
ՄԴՈ-1187